

Զեռագրի սկզբում մի երրորդ գրչից,

«յիշակ է նարեկս մեղրեցի յոհննէս վարպին (վարդապետին?) որ ես ի դուռն որ վանցն Թոյմայի Առքլյն օվ ոք որ ընթեռնու միոյ բերիւ ողորմի ասէ Եւ դուք յիշեալ լիչիք Առաջի Քւնի Այ մերոյ.... 44 յոլիս 10 8ին (իմա 18-ին) գրցւ»

Մ. Վարդ. Մաքուղեանց

Նարունակելի

Ա. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՐԱԿՆԵՐԸ.

(Գրուած Վերին-Ազուլեցի Մելքոն Փանեանցին)

36.

Թիֆլիս, 21 մարտի 1871.

Իմ աղնիւ և պատուական բարեկամ

Մելքոն Փանեանց,

Ահա անցանումեն երկու երկար ու ձիգ ամիսներ, որ ես ոչինչ լուր ստացած չեմ Զեղանից Զգիտեմ, ինչ է պատահած. արպիսի պատճառի բնծայեմ Զեր այսքան բազմաժամանակեայ լուսթիւնը՝ Ես զրեցի Զեզ իմ մերջին նամակը անցեալ յունուարի 20-ից յետու⁴⁾, մի քանի օր այն պատասխանական թղթից յետոյ, որ 19-ին արձակուեցաւ այս անդից առ սկ. Իիրեքտօր Նիկոլայ Դաւիդովիչ Դելեանովին:

Իմ առ Զեզ նամակի մէջ յայտնած եմ Զեզ պ. Դելեանովին ուղարկած պատասխանական նամակիս ոպարունակութիւնը, որ բոլորովին ստորագրական է, այսինքն համաձայն այն նամակագրութեանը, որ եղած էր յառաջուց պ. Քանանեանի և իմ մէջ, թէ ես պատրաստ եմ յանձն առնուել ինձ առաջարկած պաշտօնը ի վերայ հիման նորա յայտնած պայմաններին, ինդրելով միայն, որ Խնութիւնառի մեծաւորքը մարդասիրութեամբ ուշագիր ինելով իմ չքաւորութեանը և հեռաւոր անզափութեանս ծանր ծախքերին, այլ և վերստին տնակարգութեանս պիտօքին Մոսկուայի մէջ, չսորհնեն ինձ փոքր ինչ սժանդակ հնարք—600 մաս.—բայց մինչեւ այժմ ոչինչ կողմից պատասխան չըւնիմ: Զիս զարմացնում է մանաւանդ Զեր անօրի-

4) Անշուշտ, խօսքը 1874 թ. փետր, 2 նամակի մասին է, որ մենք դրել ենք № 55-ի տակ: Փանեանցի ստացած բոլոր նամակները ԱՌ-ի տակ են դրւած իրենց ստացման ժամանակի համաձայն: № 55 նամակին անմիջապէս հետեւում է այս նամակը, Յունարի 20-ից մինչեւ փետր. 2-ը դրւած ուրիշ նամակ չկայ: Յ. Տ. Յակ.

նակ լուսթիւնը Աստուած տայ, որ դորա պատճառը չինի հիւանդութիւն կամ մի այլ ձախորդ պատահար իցէ թէ իմ նամակներս թէ առ Դեկանանը և թէ առ Չեղ տեղ հասած չեն. բայց այս անկարելի է. իցէ թէ Չեղ պատասխանին իմ նամակիս կորած է ճանապարհն Կովկասեան սարերի մէջ պատահած ձրւափլատակների միջոցում, որ արդարի այս տարի ամբողջ շաբաթներ յետ ձգեցին փոստայի նամակատարութիւնքը գէպ ի Թիֆլիս, մինչև իմ ստանալի լրացիրը Պետերուրքից, դրեթէ մի ամբողջ ամիս յետ մնալով, մինչև այժմ չէ ստացվում օրինաւոր և կանոնաւոր ընթացքով:

Իմ վերջին նամակի մէջ առ Չեղ գրած էի իմ տանջողական հազի և մաղասաթբութեան մասին¹⁾, այժմ, զկնի աւելի քան թէ երկամսեայ հալումացութեան, գոհութիւն Ամենակալին, վերստին կազդուրուած է առողջութիւնս, եթէ ոչ բոլորովին, գոնեայ ցայնչափ, որ կարող եմ փոքր ինչ աշխատել և ուրախանալ գոյութեանս վերայ Օրերը այժմ բաւական մնացացած ու բարեխառնուած են, եղանակը տաք է, միայն թէ անկայուն, տաք օրերից յետոյ յանակործ ցրտանուամէն Շառերը արձակում են արդէն իւրիանց բողբոջքը. նշենիքը իւրեանց ձիւնափայլ ծաղկի մէջ են, բայց առ հասարակ պիտի ասեմ Չեղ, որ Թիֆլիզեան բնութիւնը չունի այժմ ինձ այն դեղեցկութիւնքը, որ իմ մանկութեան օրերում զմայլեցնում էին իմ հօգին, կարծեմ, բնութիւնը մինոյն է, վոխուած է միայն մարդը և սորա զաղափարքը, ախորժակը և զգացմունքը. Յառաջ բաւական էր բնութեան գեղեցկութիւնը, բայց այժմ ես որոշում եմ մարդը, որ զարդարում է բնութիւնը, ամենայն բան չի նելով և բարեկարգելով նորա մէջ, բայց այդ մարդը ես գտանում չեմ. զան որոյ և վայրենի բնութիւնը ինձ ախորժելի չէ: Եւ բարոյական պատճառները մեծ ազդեցութիւն ունին մարդուս—կրթած մարդու սրտի վերայի ես ունէի Մոսկուայում մի բարեկամ, որ զարդարում էր իմ կեանքը, որ ի ժամու և ի տարաժամու մօտ էր իմ ուրախութեանը և ցաւին, որ ճանաչում էր զիս և յարգում էր զիս ես ունէի այդ տեղ մի բարեկամ²⁾, որ կարող էի ի սրտէ սիրել և յարգել և այդպէս լցուցանել իմ սրտի կարիքը, վայելելով բարեկամական սիրոյ բաղդաւորութիւնը, որից աւելի երանաւէտ բարի

1) Եթէ «վերջին» կոչւած նամակը նամակ Ա 55-ն է, նրա մէջ ոչինչ ասւած չէ «տանջողական հազի եւ մաղասաթբութեան» մասին, այլ միայն «ես փոքր ինչ հիւանդ եմ»: Հաւանօրէն նախորդ նամակում եղած այդ անորոշ արտայատութեան մասին է խօսքը: Յ. Տէր Յակովեան

2) Մելքոն Փանեանցին է վերաբերում ակնարկը: Յ. Տէր Յակովեան

կարող չէր Աստուած պարզենիլ մահկանացու մարդուն այս հողեղէն աշխարհի վերայ:

Թիֆլիզը ինձ մի չոր ու դամաք, անհոգի քաղաք է. թող իմ անդադար պատերազմը այս խելազարհերի հետ, որոց հետ դորձ ունիմ ես, մի պատերազմ, որոյ մէջ յաղթող հանդիսանալն անզամ ես պարծանք չեմ համարում, որովհետև ոչինչ հասարակաց կարծիք չկայ, որ ձայն տար հրապարակում և հասուցումն առնէր արցարութեանը, ես իմ բոլոր բարեմտութեամբ անյօխ եմ պարապերել որ և իցէ երեսի գործ: Սորա համար հարկաւոր են ինձ վերաձբատող, համախոն և աշխատակից ընկերակիցք, իսկ յետոյ մի հասարակութիւնք հոգաբարձուք ազգի, որ հասկանում էին իմ գաղափարը, ընդունում էին իմ առաջարկութիւնքը և ունին բարի կամք համար տալ ինձ գործելու, ասպարէզ բանալու իմ աշխատասիրութեանս յօդուտ հայիկական մանուկներին ուսումնարանին թայց սոցանից ոչ մինը չկայ: այլ կան միայն մարդիկ, որ ամենայն քայլափրխում արդելք ու դժուարութիւնք յարուցանելով և կուտակելով իմ առաջի, իւրեանց անձնական հաճոյքը լցուցանելու համար, փակում են ամենայն լաւ և պիտանի բանի ճանապարհ, կործանում են ամենայն զեղեցիկ և օգտակար սկսուած: Այս տեղ ոչինչ է մի մարդու բարի կամք, մի մարդու բոլոր ոյժ և զօրութիւնը:

Եթէ հաճոյ է Զեզ զիտել մեր գերդաստանի վիճակը, փառք Առաւելոյ, ամենեքսան առողջ են և չատ կարօտով ողջունումն զջեզ, մանաւանդ իմ ամուսինու, Աղեքսանզը և Օլինիան: Մեր իմանուել խարսեաշ և սպիտակ մանուկը արդէն վաղումէ ոտքի վերայ. նորա քոյրիկ, փոքրիկ Ստեֆանիան ունի տակաւին երկար ճանապարհ հատանելու, մինչեւ կը հասանէր այդ տեղի Սոցա անուշնով ողջունում եմ զջեզ Հայրս:

Խնդրում եմ օր մի յառաջ ազատել զիս այն անհնարին մտատանջութեան վիճակից, որոյ մէջ ես և իմ ընտանիքս գտանվում ենք Զեր մասին. այլ և ողջունել իմ կողմից մեր սիրելիքը Մոսկուայում, որ ցաւելի է ասել, ինչպէս երեսումէ, մոռացած են զիս անարժանաբար:

Հոգով ու մտքով գրկախառնելով զջեզ
միամ

Զեզ սիրող և յարգող բարեկամ

Ա. Նազարեանց.

37.

Թիֆլիս, 15 ապրիլի 1871.

Իմ ազնիւ, նղբայրապատիւ բարեկամ

Մելքոն Փանեանց.

Զեր երկու վերջին նամակները, մինը անցեալ մարտի 11 թուառկանից ապահովուած ծրարով, որ էր իմ եղբօր փոխանակագիրը, իսկ միւսը ամսուս 11-ից ստացած եմ անկորուուատ ի՞նչ զարմացը Զեր կողմից իմ անհանգստութեան վերայ, եթէ ես անցեալ յունուարի 20—25 թուերից¹⁾ Զեր գրած նամակիս պատասխանը ստանում են մարտի 11-ից: Ի՞նչ ե իցէ, ուրախ եմ, որ ստացած էք իմ հեռագրական լուրը, ստացած կը լինիք մինչև այժմ նոյն մարտի 21 գրած նամակս:

Նախ և յառաջ ունիմ Զեզ տեղեկութիւն տալու Զեր պարտապան եղբօրս մասին, որ թէպէտ շատ ցաւելի է ինձ իրրե երաշխաւորի այս փոխառութեան մէջ, բայց ի՞նչ պիտի առնել, այդպիսի տիսուր դիպուածք յաճախ պատահած են մարդկութեան մէջ և դարձեալ կը պատահին, մանաւանդ մեր ասիական աշխարհում, ուր արդարութիւն, խիզ, հաւատարմութիւն, սէր անլսելի բաներ են, եղբօրս ընկերը, որ մի աղքատ չքաւոր մարդ էր, իմ եղբօր չնորհիւ և մարդասիրութեամբ ձեռք ձգելով մի փոքրիկ վաճառական գործի գումար, նորան յանձնուած արծաթը գործ դնելով խարդախութեամբ, այս բոպէիս, երբ որ ձկնեղէն ապրանքը Սալիխանից բնրած ու ծախած է չորս պարտիաներով, որոց երկուոքը իմ եղբօր ձեռնումն էին, իսկ միւսը նորա ընկերին, այժմ այդ վատթար հոգին հաշիւչ տալիս իմ եղբօրը, զանազան բազրազայք առնելով: Նորա մօտ սկզբում եղած են 700 ման, եղբօրս ձեռնում 600 ման, դոքա միանալով Սալիխանում, Մարտիրոս եղբայրս դարձեալ տալիս է նմա 370 ման, այժմ նորա ընկերը հաստատում է թէ ստացած էր միայն 270 ման, իսկ իւր երկու սայլ ծախած աւելի պատուական ձկնեղէն ապրանքի հաշիւը կամենում է աւարտել լոկ 200 ման, այնպէս որ, թող վաստակը, որ ամեննեին երեսում չէ, կապիտալը հալուած է մինչև 700 ման, որ այժմ իմ ձեռնումն է, եղբօրիցս ստացած, 600 ման: Հկայ: Ահա քեզ մի վաճառական գործ:

Ես յառաջուց ասած էի եղբօրս, որ նորա թեթևութեան հա-

1) Այդ ժամանակներում դրւած նամակ Փանեանի նամակների մէջ չկայ, երեւի գրւած է, բայց տեղ չի հասէլ: Փանեանի նաղարեանից ստացած նամակների մէջ յունւարի 14 նամակին անմիջապէս յաջորդում է փետր. 2-ին գրած նամակը: Յ. Տ. Յ.

մար, ևս պատրաստ էի ընծայել նորան վճարելի տոկոսիքը, միայն թէ հաշիւ տեսանէր իւր ընկերի հետ և անարատաբար հասուցաւ նէր արծաթազլուխը 1300 ման. որ ես հասուցանէի Զեզ, իմ վերայ պարտք զրել տալով Զեր պատկանելի տոկոսիքը, բայց այժմ և կապիտալը կէս ու կէս և եղած Գործը այսօր էգուց պիտի դատաստանի տակ ընկնի, որչափ ևս անախորժ էր ինձ ՚եռքը, իմ ազնիւ բարեկամ, խնդրեմ, ամեննեին միամիտ լինիք, և հաւատացած կենաք, որ պատասխանատուն ես ևմ, որովհետեւ երաշնաւոր եղայր ես այս տիտուր անցքը պատմում եմ Զեզ միայն իրքի մի օրինակ թէ որպիսի զարչելի և Աստուծոյ չնորհից զրկած մարդիկ ապրում են այս տնաւեր թիֆլիզում Եղբայրս մի բարեխիղձ, երկիւղած, բայց անփորձ և տգէտ մարդ, կամ թէ իւր բոլոր տիտուր փորձերով մինչև այժմ չխելօքացած, հաւատաւոր անձր—ամօթապարաւած իմ առաջն, իւր եղբօր առաջն, չզիտէ այս բոպէիս չափ գնել իւր սրտի խոռվութեանը և ցաւին և կիսանես եղած, անկողնի մէջ է։ Որչափ ևս առ նա ազնիւ ևմ գտանուած, նոյն չափով նա ամօթից նուածուած, հազիւ կարողուում է նայել երեսիս ի հարկէ այս բոպէիս հարկաւոր է միայն վճանձնութիւն և Եղբայրսիրութիւն և ոչ արծաթսիրութիւն։ Աստուած ողորմած է։

Ես կաշխատեմ մի 1000 ման. հասուցանել Զեզ այս ամսի վերջումը, ինչպէս ասացի վերիւմը, Եղբայրս յանձնած է ինձ 700 ման. իսկ մեացածը մի այլ ժամանակ, և ինչքան տոկոսիք կը պատկանի Զեզ, նոյնպէս իմ պարտքս է։ Այսքան այս մասին,

31 մարտից ստացայ պարոն Դիելեկտոր Դիելեանովից թուղթ, որոյ մէջ տեղեկացնելով զիս այժմեան բոլորովին չահաւէտ և ուշրաբալից պայմաններին արօֆեսորական պաշտօնի, քաջակերում է զիս համարձակօրէն և տունց տարակուսանի վճռել իմ կողմից իմ տեղափոխութեան ինդիրը։ Ես պատասխանեցի նմա ամեննեին դրականարար և վճռողաբար թէ ընդունում ևմ նորա առաջարկութիւնը, յանձն առնուլ պարսից յեզուի արօֆեսորութիւն ի վերաւ հիման Լիցէնի նոր կարգադրութեան (ՊՏԱՏԱ), Խնդրելով միայն նորանից, որ գործ դնէ իւրեանից կախ եղած հնարները հաստատել տալու զիս իմ նոր պաշտօնիս մէջ որչափ կարելի է կանուխ, հասուցանելու ինձ իմ հաստատութեան թուղթը, այլ և հոգալու ինձ արքունի պօդարօժնայիա։ Իսկ ես մտածում եմ յուլիսի 15-ին, Ամենակալի յաջողութեամբ դուրս ելանել թիֆլիզից, որ գոնեայ օգոստոսի կիսումը լինէինք Մոսկուաւ Մատենադարանը և այլ տնտեսական անօթքը հանապարհ կը ձգեմ մայիսի առաջին թուերում։

Ուրեմն փառք և գոհութիւն մատուցանենք Ամենակարողին, որ շուտով դարձեալ կը բաղդաւորուինք միմեանց քաղցր և երանական տեսութեամբ, դարձեալ կը զրկախառնենք զմիմեանս, այն

խորհրդով, որ այսուհետեւ չբաժանուինք միմնանցից, այլ ապրինք և մեռանինք ի միասին, որովհետեւ այդպէս է վերին տնտեսութեան բարի կամքը, որ արդէն 20 տարի անփոփոխ տնօղական բարեկամութեամբ կապելով միմնանց հետ մեր սիրտերը, պատրաստած է մեզ այնքան քաղցր և երկնային օրեր թէ ուրախութեան և թէ տրտութեան արտասուրի մէջ:

Առ ի սրտէ սիրալից ողջոյնք ուզարկում են խմայինքը, որ մի յառաջ ցանկալով գրկախառնել զջեղ վերստին. իսկ ես այժմ գրում եմ միայն զիս

Զեր Ս. Նազարեանց,

38.

Թիֆլիս 9. ին մայիսի 1871.

Իմ հոգեհարազատ բարեկամ

Մելքոն Գասպարեան,

Զեր յարգելի նամակը անցեալ ապրիլի 28 թուականից ստացած եմ իւր ժամանակին և չնորհակալ եմ Զեր քաղցր բարեկամական տողերի համար, որ արգարե մեծ խորհուրդ և կշիռ ունին իմ աշքում, իրեն անտարակուսելի ապացոյց, թէ Աստուծոյ լայն ու արձակ արարչագործութեան մէջ կան մարդիկ, որ սիրում են մեզ, որպէս և սիրելի են մեզ. Բայց մի այլ մտածութիւն, որպէս յորով անգամ իմ կեանքիս մէջ, նոյնպէս այս բոլեկիս տիրապետումէ իմ սրտին և շարժումէ զայդ մինչեւ դէպ ի արտասուր. այն մտածութիւնը, որ բարեկործ Աստուծը պարզեած էր մեզ մի բարեկամութիւն, որ արդէն կարող է հաշունլ մօտ քսան տարի, և նրապիսի խորհրդաւոր աստիք, տարիք երկուստիք, հաւատարիմ լծակցութեամբ միմնանց հետ տարած ուրախութեան և ցաւի, Դուի իմ ուրախութեանս ուրախակից և ցաւիս ցաւակից լինելով, որպէս քո սիրականներին, և ես նոյնպէս քո ուրախութեանը և ցաւին կցորդ լինելով։ Մի սակաւ ազիւտ բարեկամութիւնն ես բազդաւոր եմ, որ կարող եմ ասել, թէ երկուստիք խոնմութեամբ և յարցութեամբ առ միմնանս, մեր բարեկամութիւնը մեացած է մինչեւ այսօր սուրբ և անարատ—գուտ և անխառն ոսկի. և քաջայոյս եմ, որ մեք իրեն այդպիսի բարեկամք միմնանց կը մեռանինք, թէ ողէտ անմման մինս միւսի սիրոյ քաղցր յիշատակներով։

Զեր ցաւակցութիւնը իմ եզրօր անրադութեան վերայ մի շատ գեղեցիկ զգացողութիւն է. միայն թէ իմ կողմից փոքր ինչ պղտորդումէ այդ ցաւակցութիւնը, տեսանելով որ իմ եղբայրն ես

բազում մասամբ խարդախ է գտանուած առ իս, որը է կատարած առանց իմ գիտութեանը, բայց իմ արծաթով, և այդպէս իմ գտան վասակը, ինչպէս ասում են, չնի ու գայլի բաժին եմ արել, իմ հոգիս գուշակում էր, որ գործը այսպէս պիտի վերջանար, և այդպէս վերջացաւ, հասուցանելով ինձ 700 ման. վեաս Բայց ես ուռախ եմ, որ շուտով ազատուելու է⁴⁾ այս Առղոմ և Գոմոր Թիֆլիզ, ուր մի օր խազաղութիւն կեանքի տեսած չեմ:

Եատ ցաւեցայ Զեր մութ ակնարկութեան վերայ, թէ բարեկամ համարուած անձինք առ Զեզ խարդախ էին գտանուած, այդցաւը այնքան ես առաւել սաստկանում է ինձ, որչափ ես իմ կեանքիս մէջ միշտ աշխատած եմ գտել և մաքրել իմ անձը տիսուր մարդկային կեղատից և կղկղանքից—և խարդախել բարեկամը—սարսափելի մտածութիւնն Բայց իմ կարծիքով այն եղբայրը, որ կը խարդախսէ զմեզ, այն բարեկամը, որ նենգաւորութիւն կառնէ, ոչ մեր եղբայր է և ոչ մեր բարեկամ, այլ այդպէս միայն երեսցած է:

Իմ զրեանց և տնտեսական նիւթերի կապոցները այս օրեւում կուղարկեմ գէպ ի Մոսկուա, Սաշան մեծ քաջագործութեամբ և աշխատութեամբ յօրինել է կապոցները հազար ու մի չուաններով ամրացնելով արկղները, երբ որ դորա տակից դարմանով և խոտերով պատատած էին:

Ես ամենամին ձայնակից եմ Զեր կարծիքին, որ պիտոյ էր հարցաքննութիւններից յետոյ ճանապարհ ընկնել, այսինքն յունիսի վերջերում, կամ յուլիսի սկզբում, որովհետեւ իմ օր մի յառաջ հասանել Մոսկուա, շատ կը թեթեացնէր իմ տնտեսական կարգաւորութիւնս այդ տեղ որ կարօտ է հոգաբարձութեան և ժամանակի: Ինչպէս արդէն զրած եմ Զեզ, ինդիքը աւարտուած է. ինչ առաջարկութիւն և ինչ պայմաններով եղած էր ինձ—օրդինարնայ պրոֆեսսուրա պեսից, յայկա զա յալուան 3000 րуб.—Ես ընդունած եմ, այժմ մնում է Ինստիտուտի գիրեքտօրին հասուցանել ինձ իմ հաստատութեան թուղթը և կարգավորութիւն առնել, որ ես ստանամ Թիֆլիզում կազեօննայա պօդօրօմնայեա:

Իմ Թիֆլիզեան երկամեայ կեցութիւնս պիտոյ էր այսպէս տեսանել, ես կամեցայ իմ շատ ու տիսուր փորձերի վերայ մի փորձ ևս յաւելացնել և այդպէս աւելի իմաստնանալ, քան թէ էի, կարծեմ, որ աւելի իրաւունք ունիմ Զեր սիրոյ և յարգութեան վերայ, քան թէ յառաջ, որովհետեւ գործով ցոյց տուեցի ես, թէ կարող էի զոհարեր լինել մեր ազգի օգտի համար, ծանր զրկանքներ յանձն առնուլ Հայոց ազգի զաւակների բաղդաւորութեան համար: Տեսայ

4) Անկասկած, անուշադրութեան սխալ է, պէտք է լինի՝ ազատուելու եմ: Յ, Տ. Յակ.

շատ բան, որ տեսած չէի, լսեցի շատ բան, որ լսած չէի, փորձեցի ամենաղառն փորձեր, ցած իջայ ասիական դժոխքի մէջ, տեսայ մարդերի բարոյական և մատառութական և նիւթական ամեն տեսակ թշուառութիւնք, մի մարդ էի, այժմ տասն մարդ զարձած, այսինքն փորձերով ճոխացած և հարստացած, գարձեալ պիտի վերացանամ զէպ ի լոյս այսար և առ Ձեզ, Մոսկուա, գարձեալ տեսանելու և գգուելու իւ ազնիւ, հոգեհարազատ բարեկամդ, այլ և ուխտելու Ձեր հետ, որ այսուհետեւ հարկաւոր էր մեզ ի միասին մնալ, ապրել և մեռնել ի միասին, որովհետեւ թիֆլուզիք, կողիտ և վայրենաբարոյ մարդիկ, չհասկացան զիս, և ամենեին զուրկ են ապնիւ մարդկային կարիքներից:

Պարոն Յակոբ Սերոբեանցը, մի հատ մօտիկ բարեկամը և օգնականը ինձ ուղարկում է Ձեզ իւր պիոյ և յարգութեան ողջոյնը:

Իմայինքը ուղարկում են Ձեզ նոյնպէս բազում կարօտով և յարգութեամբ ողջոյն և ցանկանում են օր մի յառաջ զրկախառնել Ձեզ, Խարտեաշ և գանգրահեր կմանուէլին շատ կը հաւանեմ. Ստեփանիան նոյնպէս բարի էակիկ է. ազօթենք առ Աստուած, որ պարդեէ մեզ յաջողութեամբ ճանապարհորդութիւն այսքան հեռաւոր տարածութեամբ, մանաւանդ այնպիսի փոքրիկ մանուէներով. — որ մի դժուարին ինդիր է, կամենում ենք Պօտիու վերայով, Անծովով և Օդեսայի վերայով հասանել երկաթուղուն, որ այնուհետեւ ուղղակի ճանապարհով կը հասուցանէ մեզ զէպ ի Մոսկուա.

Ամենաքաղցր ակնկալութեամբ սպասելով Ձեր վերստին իրաւական տեսութեանը,

Մնամ Ձեր

Ա. Նազարեանց:

Վ. Գ. Անցեալ նամակում գրեցի Ձեզ, որ մայիս ամսում կուղարկեմ Ձեզ 1000 ման, բայց այս բագեիս կայ մօտա 900 միայն, և ճանապարհի ծախք ևս հարկաւոր է ինձ. ուրեմն այդ արծաթը կը մնայ իմ մօտ իմ եղբօրս վերսելով, մինչև գամ Մոսկուա Բայց եթէ այս միջոցում իմ կալուածք Ստարօպօլի շրջանում վաճառուեաւ, որոյ մասին խօսք կայ, այնուհետեւ հնար կը լինի ինձ շուտով կարգադրել այն շփոթ ու խառնակութիւնը, որ իմ պատուական եղբայրը բերեց իմ գլխիս:

Ա. Ն.

8. Տակովեան

Հայոց գնուման վեցամյա տարու զամ նախառ եռոքքամն մաս կամուառ մասնաւու չ եռոքքամն մաս կ աղմանանց դադ մայմերցն նոյն բարաւառու առաջաւառու (122) մասնաւու մայմերցն առաջաւառու

